ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հունիսի 2012 թվականի N 15 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՋՈՒՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՏԵՂԱՑԱԾ ԿԱՐԿՈՒՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերով

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ջուջևան համայնքում 2012թ. հունիսի 8-ին տեղացած կարկուտի հետևանքով քաղաքացիներին պատճառված վնասները ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Միսակ Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Գրիշա Բադալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Հարություն Քոչարյան –ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Աշոտ Մարդանյան –ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Վաղինակ Սուքոյան– ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

Սամվել Գևորգյան -ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրել կարկուտի հետևանքով քաղաքացիներին պատճառված վնասները և ուսումնասիրության վերաբերյալ կազմված ակտերը 3-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

10 հունիսի 2012թ.
ք. Իջևան